ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ (Կ-1201-02.12.2025-ՊԻ-011/0) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ (Կ-1201[1-10]-02.12.2025-ՊԻ-011/0) ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	Հայաստանի Հանրապետության սնանկության օրենսգրքի նախագիծ				
1.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Իրավական որոշակիության ապահովման նպատակով առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «գործերի քննության հետ կապված» բառերից հետո լրացնել «և սնանկության վարույթին առնչվող այլ» բառերը:	**Ընդունվել է:** Նախագծի 1-ին հոդվածում կատարվել է տեխնիկական ուղղում:	**Ընդունվել է:**
2.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդված**	Իրավական որոշակիության ապահովման նպատակով առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում բացի «Դատարան»-ի հասկացությունից, սահմանել նաև Վերաքննիչ և վճռաբեկ դատարանի հասկացությունները, ինչը	**Ընդունվել է:** Նախագծի 2-րդ հոդվածում կատարվել են տեխնիկական ուղղումներ: Նախագծի ամբողջ տեքստում օգտագործվող «Սնանկության դատարան»	**Ընդունվել է:**

			հնարավորություն կտա նախագծի ամբողջ տեքստում նույն հասկացությունը կիրառել նույն ձևակերպմամբ: Ըստ այդմ, առաջարկվում է նշված կետը լրացնել հետևյալ բառերով՝ «վերաքննիչ դատարան՝ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան, վճռաբեկ դատարան՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ», 4-րդ և 8-րդ հոդվածներում «բովանդակության» բառը փոխարինել «բովանդակությամբ»: Բացի այդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»: Միաժամանակ, Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում տրվում է «Դատարան»-ի հասկացությունը: Ուստի, առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-7-րդ և 45-րդ կետերում «Սնանկության դատարան» բառերը	բառերը փոխարինվել են «Դատարան» բառերով:	

			փոխարինել «Դատարան» բառերով: Առաջարկում ենք սույն պահանջը պահպանել բաև Նախագծի ամբողջ տեքտում, և Նախագծի ամբողջ տեքտում օգտագործվող «Սնանկության դատարան» բառերը փոխարինել «Դատարան» բառերով:		
3.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդված**	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ և 20-րդ կետերում տրված հասկացությունները ունեն կիրառության նեղ շրջանակ, և դրանք առավելապես վերաբերում են առանձին ընթացակարգերը կարգավորող գլուխներին՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածից հանել նշված կետերը:	**Ընդունվել է:** Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասից հանվել են 19-րդ և 20-րդ կետերը:	**Ընդունվել է:**
4.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդված**	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծով արդեն իսկ տրված է պալատի հասկացությունը՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետից հանել «անկախ,» և «ստեղծման և» բառերը, քանի որ դրանք հակասում են Նախագծի 87-րդ հոդվածին:	**Ընդունվել է:** Նախագծի 2-րդ հոդվածում կատարվել է տեխնիկական ուղղում:	**Ընդունվել է:**
5.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներ**	Հաշվի առնելով պրակտիկ դեպքերը և շահագրգիռ մարմիններից ստացված առաջարկները՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում և 4-	**Ընդունվել է:** Նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածների համապատասխան կետերում «եռամսյա» բառը	**Ընդունվել է:**

			րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «եռամսյա» բառը փոխարինել «մեկամսյա» բառով:	փոխարինվել է «մեկամսյա» բառով:	
6.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 5-րդ, 146-րդ, 147-րդ, 263-րդ, 264-րդ, 265-րդ և 266-րդ հոդվածներ**	Հաշվի առնելով պրակտիկ դեպքերը և շահագրգիռ մարմիններից ստացված առաջարկները, ինչպես նաև որոշ տեսակի դեպքերի մասով բացառություն սահմանելու անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «1. Վճարային պարտավորությունն անվիճելի է՝ 1) իրավաբանական անձ պարտապանի դեպքում սույն կետի «ա» ենթակետով նախատեսված պահանջի առկայության, իսկ ֆիզիկական անձ պարտապանի դեպքում՝ սույն կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված պահանջների միաժամանակյա առկայության դեպքում. ա. վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած դատական կամ արբիտրաժային տրիբունալի ակտով, կամ գումարի բռնագանձման պահանջով կողմերի համար պարտադիր դարձած նոտարի կարգադրությամբ, բացակայում է հաշվանցի հնարավորությունը. բ. պարտատիրոջ համար կատարողական վարույթն ավարտվել	**Ընդունվել է:** Նախագծի 5-րդ հոդվածը, ինչպես նաև Նախագծի 146-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետը, 147-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, 263-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետը, 264-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 265-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետը, 266-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը վերախմբագրվել են:	**Ընդունվել է:**

			է բացասական ելքով, այն է՝ պարտատիրոջ պահանջը չի կատարվել և կատարողական վարույթը ավարտվել է պարտատիրոջ հետ չկապված որևէ հիմքով.»: Արդյունքում, իրավաբանական անձանց հարկադրված սնանկության դեպքում վերացվել է հարկադիր կատարման փուլն անցնելու անհրաժեշտությունը: Դա նշանակում է, որ պարտավորությունը համարվում է անվիճելի միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության դեպքում: Ֆիզիկական անձանց համար, սակայն, կատարողական վարույթի բացասական ելքով ավարտված լինելու պահանջը պահպանվել է: Միաժամանակ, վճարային պարտավորության անվիճելիությունը հաստատող հիմքերի ցանկում, բացի դատարանի ակտերից, ներառվել են նաև արբիտրաժային տրիբունալի վճիռները և նոտարի՝ գումարի բռնագանձման կարգադրությունները: Նշված փոփոխության հիման վրա անհրաժեշտ է փոփոխություններ կատարել նաև սնանկության դիմումում նշվող տեղեկությունների մասով: Մասնավորապես,		

			առաջարկվում է Նախագծի 146-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետը, 147-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, 263-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետը, 264-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 265-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետը, 266-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ դրանք համապատասխանեցնելով Նախագծի 5-րդ հոդվածի բովանդակությանը:		
7.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 8-րդ հոդված**	Նախագծի 8-րդ հոդվածը, ըստ էության, կարգավորիչ նշանակություն չունի, ուստի Նախագիծը անհարկի չծանրաբեռնելու համար առաջարկվում է հանել այն:	**Ընդունվել է:** Նախագծի 8-րդ հոդվածը հանվել է:	**Ընդունվել է:**
8.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 10-րդ հոդված**	Իրավական որոշակիության ապահովման նպատակով առաջարկում ենք վերաշարադրել Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասը՝ հետևյալ խմբագրությամբ. «Սնանկության վարույթի շրջանակներում հնարավորինս կիրառվում են այնպիսի միջոցներ, որոնք թույլ են տալիս նվազագույն միջոցներով առավելագույն չափով հասնել վարույթի նպատակին:»:	**Ընդունվել է:** Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրվել է:	**Ընդունվել է:**
9.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 12-րդ հոդված**	Նախագծի 12-րդ հոդվածում նախատեսվում են տեղեկությունների բացահայտման կամ հասանելիության վերաբերյալ կարգավորումներ, մինչդեռ, պարզ չէ, դրանցով նշված	**Ընդունվել է:** Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասում «բացահայտումը» բառից հետո լրացնել «,	**Ընդունվել է:**

			հանգամանքներն ու անհրաժեշտությունն ինչ չափանիշներով և ում կողմից է գնահատվելու: Ուստի առաջարկվում է նշված հոդվածում հստակեցնել, որ նշված հանգամանների առկայությունը գնահատվելու է դատարանի կողմից:	Դատարանի գնահատմամբ,» բառերը, իսկ 2-րդ մասում «սահմանափակումը» բառից հետո լրացնել «, Դատարանի գնահատմամբ,» բառերը:	
10.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 28-րդ հոդված**	Նախագծի 28-րդ հոդվածի 4-րդ մասով օգտագործվում է «երրորդ անձ գրավատուի և երաշխավորի և նրանց՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով կառավարման ենթակա գույք» ձևակերպումը, այնինչ գտնում ենք, որ նշված ձևակերպումը կարող է տարընկալումների տեղիք տալ: Ուստի, իրավական որոշակիության ապահովման նպատակով առաջարկում ենք Նախագծի 28-րդ հոդվածի 4-րդ մասում «և նրանց՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով կառավարման ենթակա» բառերը փոխարինել «որպես ապահովման միջոց համարվող» բառերով:	**Ընդունվել է:** Նախագծի 28-րդ հոդվածի 4-րդ մասում «և նրանց՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով կառավարման ենթակա» բառերը փոխարինվել են «որպես ապահովման միջոց համարվող» բառերով:	**Ընդունվել է:**
11.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 30-րդ հոդված**	Նախագծի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության վարույթի շրջանակներում շահագրգիռ անձինք գործին մասնակցող անձ են համարվում և դատավարական կարգավիճակ են ստանում սնանկության վարույթի տվյալ ընթացակարգը ուղղակիորեն իրենց	**Ընդունվել է:** Նախագծի 30-րդ հոդվածի 2-րդ մասում «բացահայտելու պահից» բառերից հետո լրացվել է «, որն իրականացվում է Դատարանին գրավոր	**Ընդունվել է:**

			իրավունքներին և պարտականություններին կամ լիազորություններին առնչվելու մասին սնանկության դատարանի և գործին մասնակցող անձանց համար բացահայտելու պահից: Մինչդեռ, նշված հոդվածի իմաստով «բացահայտելու պահը» բավարար չափով որոշակի չէ: Ուստի, առաջարկում ենք Նախագծի 30-րդ հոդվածի 2-րդ մասում «բացահայտելու պահից» բառերից հետո լրացնել «, որն իրականացվում է Դատարանին գրավոր միջնորդություն կամ դիրքորոշում ներկայացնելու միջոցով՝ կցելով տվյալ ընթացակարգն իր իրավունքներին կամ պարտականություններին առնչվելու փաստը հաստատող ապացույցներ» բառերը:	միջնորդություն կամ դիրքորոշում ներկայացնելու միջոցով՝ կցելով տվյալ ընթացակարգն իր իրավունքներին կամ պարտականություններին առնչվելու փաստը հաստատող ապացույցներ» բառերը:	
12.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 42-րդ հոդված**	Իրավական որոշակիության ապահովման նպատակով առաջարկում ենք վերաշարադրել Նախագծի 42-րդ հոդվածը՝ հետևյալ խմբագրությամբ. «1. Սնանկության վարույթի շրջանակում, այդ թվում՝ վարույթի առանձին գործընթացներում, ներկայացուցչությունն իրականացնում են գործին մասնակցող անձի կողմից ընտրված անձինք:	**Ընդունվել է:** Նախագծի 42-րդ հոդվածը վերախմբագրվել է:	**Ընդունվել է:**

			2.Դատարանում ներկայացուցչությունն իրականացնում են փաստաբանները, այդ թվում՝ օրենքով սահմանված կարգով հավատարմագրված օտարերկրյա փաստաբանները: Դատարանում ներկայացուցիչ կարող են լինել նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝ դատարանում ներկայացուցչություն իրականացնելու լիազորություն ունեցող այլ անձինք: 3. Միևնույն անձը գործի քննության ընթացքում կարող է լինել այդ գործին մասնակցող երկու կամ ավելի անձանց ներկայացուցիչ, եթե նրանց շահերի միջև չկա հակասություն:»:		
13.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 52-րդ հոդված**	Նախագծի 52-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների պաշտպանության նպատակով լիազոր մարմինը կարող է սահմանել փաստաթղթերի և տվյալների ցանկ, որոնք չեն տրամադրվում սնանկության վարույթի մասնակիցներին՝ պայմանով, որ դա չի խոչընդոտում	**Ընդունվել է:** Նախագծի 52-րդ հոդվածի 3-րդ մասը հանվել է:	**Ընդունվել է:**

			վերջիններիս կողմից սնանկության վարույթում իրենց իրավունքների իրացումը կամ պարտականությունների կատարումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր ոլորտային օրենք արդեն իսկ նախատեսում է գաղտնիքի փոխանցման համապատասխան կառուցակարգեր՝ առանձին ցանկի նախատեսումը նպատակահարմար չէ: Ուստի առաջարկում ենք Նախագծի 52-րդ հոդվածի 3-րդ մասը հանել:		
14.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 75-րդ, 81-րդ, 82-րդ, 83-րդ, 84-րդ, 86-րդ, 87-րդ, 89-րդ, 90-րդ, 95-րդ, 97-րդ, 105-րդ հոդվածներ**	Առաջարկվում է Նախագծից հանել կառավարիչների պալատի ուժեղացմանը վերաբերող նորարարությունները և «դպրոցի» գաղափարը, նախատեսել լիազոր մարմնի կողմից պալատի նկատմամբ վերահսկողության մեխանիզմները, ինչպես նաև վերանայել կառավարչի օգնականի կողմից կառավարչի գործառույթներ իրականացնելու վերաբերյալ դրույթը, և դրան առնչվող կարգավորումները:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**

15.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 113-րդ հոդված**	Նախագծի 113-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ էության, կարգավորիչ նշանակություն չունի, ուստի Նախագիծը անհարկի չծանրաբեռնելու համար առաջարկվում է հանել այն:	**Ընդունվել է:** Նախագծի 113-րդ հոդվածի 3-րդ մասը հանվել է:	**Ընդունվել է:**
16.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 117-րդ և 118-րդ հոդվածներ**	Առաջարկվում է խստացնել կանխարգելիչ վերակառուցման վարույթի շրջանակներում դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի պահանջները, հստակցեցնել ժամկետներին, ինչպես նաև դատական վերահսկողությանը վերաբերող կարգավորումները: Ըստ այդմ առաջարկվում է հանել Նախագծի 117-րդ հոդվածի 2-րդ մասը, Նախագիծը լրացնել նոր՝ 117-րդ հոդվածով, ինչպես նաև Նախագծի 118-րդ հոդվածը լրացնել 3-6-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ. **Հոդված 117. Կանխարգելիչ վերակառուցման վարույթ սկսելու դիմումին կից ներկայացվող փաստաթղթերը** 1. Կանխարգելիչ վերակառուցման վարույթ սկսելու վերաբերյալ դատարան ներկայացվող դիմումին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը և	**Ընդունվել է:** Նախագծի 117-րդ հոդվածի 2-րդ մասը հանվել է, Նախագիծը լրացվել է նոր՝ 117-րդ հոդվածով, Նախագծի 118-րդ հոդվածը լրացվել է 3-6-րդ մասերով:	**Ընդունվել է:**

			տեղեկությունները՝ 1) վերակառուցման հիմնավորումը՝ ներառյալ պարտապանի ֆինանսական դժվարությունների նկարագրությունը և առաջացման պատճառները, վերակառուցման նպատակները և միջոցառումները, պարտատերերի հետ ընթացող բանակցությունների վիճակի նկարագրությունը, ինչպես նաև պարտապանի գործունեության շարունակականության և վերակառուցման իրատեսականության տնտեսական հիմնավորումը, 2) պարտապանի ֆինանսական վիճակի գնահատումը, ներառյալ՝ ընթացիկ ֆինանսական դրությունը և առաջիկա առնվազն 6-ից մինչև 24 ամիս ժամկետով իրացվելիության (լիկվիդայնության) կանխատեսումը, դրամական հոսքերի կանխատեսումները, ֆինանսավորման աղբյուրների նկարագրությունը և գործունեության շարունակականության ապահովման միջոցները, 3) հայտարարություն՝ պարտապանի սնանկության		

			վտանգի առկայության վերաբերյալ, 4) պարտատերերի ցուցակը՝ նշելով յուրաքանչյուր պարտատիրոջ անունը (անվանումը), պահանջի չափը, ապահովված կամ չապահովված լինելը և ապահովման միջոցների բնույթը (առկայության դեպքում), 5) այն պարտատերերի պահանջների նկարագրությունը ում վրա ազդում է վերակառուցման ծրագրիրը և նրանց պահանջների դասերը, 6) վերակառուցման ծրագրի նախագիծը՝ առկայության դեպքում: 2. Պարտատերը կանխարգելիչ վերակառուցման վարույթ սկսելու դիմում ներկայացնելու դեպքում պարտապանի համաձայնությունից բացի պարտապանից ստանում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված փաստաթղթերի պատրաստման և դատարան ներկայացման համար անհրաժեշտ տվյալները և փաստաթղթերը: **Հոդված 118. Կանխարգելիչ վերակառուցում սկսելու դիմումը վարույթ ընդունելու և կանխարգելիչ վերակառուցման**		

			վարույթ սկսելու մասին դատարանի որոշումները 1. Սույն օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված կանխարգելիչ վերակառուցման վարույթ սկսելու դիմումը Դատարանը այն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում ընդունում է վարույթ, եթե առկա չեն սույն օրենսգրքի 156-րդ և 157-րդ հոդվածներով սահմանված՝ դիմումի ընդունումը մերժելու կամ դիմումը վերադարձնելու հիմքերը: 2. Դատարանը դիմումի վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկում է պարտապանին և պարտատերերին: 3. Կանխարգելիչ վերակառուցում սկսելու դիմումը վարույթ ընդունելուց հետո երկշաբաթյա ժամկետում դատարանը որոշում է կայացնում կանխարգելիչ վերակառուցման վարույթ սկսելու կամ կանխարգելիչ վերակառուցման վարույթ սկսելու մասին դիմումը մերժելու մասին: 4. Դատարանը որոշում է կայացնում կանխարգելիչ վերակառուցման վարույթ սկսելու մասին դիմումը մերժելու մասին,		

			եթե դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ պարտապանը չունի վերակառուցման ողջամիտ հեռանկար: 5. Կանխարգելիչ վերակառուցման վարույթ սկսելու մասին Դատարանի որոշման կայացման պահից սկսվում է վերակառուցման ծրագրի բանակցությունների փուլը: 6. Վերակառուցման ծրագիրը պետք է քվեարկության ներկայացվի Դատարանի կողմից կանխարգելիչ վերակառուցման վարույթ սկսելու մասին որոշման կայացման, իսկ մորատորիում կիրառվելու դեպքում մորատորիումի կիրառման պահից ոչ ուշ, քան չորս ամսվա ընթացքում:		
17.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 123-րդ և 295-րդ հոդվածներ**	Իրավական որոշակիության ապահովման և հնարավոր տարընկալումներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է Նախագծի 123-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում բացահայտել շահերի լավագույն պաշտպանվածության բովանդակությունը, ուստի	**Ընդունվել է:** Նախագծի 123-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում «շահերի լավագույն պաշտպանվածությունը» բառերը փոխարինվել են «կանխարգելիչ վերակառուցման վարույթի	**Ընդունվել է:**

			առաջարկում ենք նշված կետում «շահերի լավագույն պաշտպանվածությունը» բառերը փոխարինել «կանխարգելիչ վերակառուցման վարույթի շրջանակներում ավելի քիչ գումար չեն ստանա, քան այն գումարը, որը ողջամտորեն կստանային լուծարման վարույթի դեպքում» բառերով: Նույն հիմնավորմամբ, անհրաժեշտություն է առաջանալ լրացում կատարել նաև Նախագծի 295-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «շահերի լավագույն պաշտպանվածությունը» բառերը փոխարինելով «վարույթի շրջանակներում ավելի քիչ գումար չեն ստանա, քան այն գումարը, որը ողջամտորեն կստանային սովորական լուծարման վարույթի դեպքում» բառերով:	շրջանակներում ավելի քիչ գումար չեն ստանա, քան այն գումարը, որը ողջամտորեն կստանային լուծարման վարույթի դեպքում» բառերով, իսկ Նախագծի 295-րդ հոդվածի 2-րդ մասում «շահերի լավագույն պաշտպանվածությունը» բառերը փոխարիվնել են «վարույթի շրջանակներում ավելի քիչ գումար չեն ստանա, քան այն գումարը, որը ողջամտորեն կստանային սովորական լուծարման վարույթի դեպքում» բառերով:	
18.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 150-րդ հոդված**	Հաշվի առնելով պրակտիկ դեպքերը և շահագրգիռ մարմիններից ստացված դիտարկումները՝ առաջարկում ենք հանել Նախագծի 150-րդ հոդվածի 2-րդ մասը: Արդյունքում, սնանկության վարույթից հանվում է դատախազության հայցով անձին սնանկ ճանաչելու մեխանիզմը: Միաժամանակ, հաշվի առնելով այն	**Ընդունվել է:** Նախագծի 150-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերը հանվել են:	**Ընդունվել է:**

			հանգամանքը, որ ֆիզիկական ածանց առանձնահատկությունները սահմանող ենթաբաժնում արդեն իսկ նախատեսված է, որ ֆիզիկական անձի սնանկության հետ կապված հարաբերությունները, որոնք կարգավորված չեն նույն գլխով, կարգավորվում են սույն օրենսգրքի մյուս գլուխներով այնքանով, որքանով այդ կարգավորումներն իրենց բնույթով կիրառելի են դրանց նկատմամբ՝ առաջարկում ենք հանել նաև Նախագծի 150-րդ հոդվածի 6-րդ մասը:		
19.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 187-րդ հոդված**	Իրավական որոշակիության ապահովման և հնարավոր տարընկալումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 187-րդ հոդվածի 3-րդ մասում «Սույն մասում նշված ծանուցումն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում գրավառուն իրավունք ունի օգտվել գրավադրված գույքը արտադատական կարգով իրացնելու իրավունքից:» նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն մասում նշված ծանուցումն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում գրավառուն իրավունք ունի	**Ընդունվել է:** Նախագծի 187-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասությունը վերախմբագրվել է:	**Ընդունվել է:**

			նախաձեռնել գրավադրված գույքի արտադատական կարգով իրացման գործընթացը:»:		
20.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 217-րդ հոդված**	Հաշվի առնելով պրակտիկ դեպքերը և շահագրգիռ մարմիններից ստացված դիտարկումները՝ անհրաժեշտություն է առաջացել սահմանել ապահովված պարտատերերի շահերի պաշտպանության հստակ և առավել մանրամասն մեխանիզմներ ֆինանսական առողջացման ծրագրի ընթացքում: Ըստ այդմ, առաջարկում ենք Նախագծի 217-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «եթե ապահովված պարտատերը բանկ կամ վարկային կազմակերպություն է, ում հանդեպ մինչև սնանկ ճանաչվելը պարտապանի ունեցած պարտավորությամբ նախատեսված էր պարտավորության մաս առ մաս կատարում, ապա տվյալ ապահովված պարտատիրոջ առաջարկով ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսվում է ապահովված պարտավորության մաս առ մաս մարման պահանջ՝ սկսած ֆինանսական առողջացման ծրագրի երրորդ ամսից՝ յուրաքանչյուր հերթական մասի մարումը ոչ ավել, քան մինչև պարտապանին սնանկ ճանաչելը գործող պարտավորության հերթական մասի մարման չափով,», ինչպես նաև 3-րդ մասը շարադրել	**Ընդունվել է:** Նախագծի 217-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է 3-րդ կետով, իսկ 3-րդ մասը վերախմբագրվել է:	**Ընդունվել է:**

			հետևյալ խմբագրությամբ. «Ապահովված պարտատերը ստանում է առանց սահմանափակման գրավի առարկան իրացնելու իրավունք սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կամ 4-րդ կետերի պահանջները խախտելու դեպքում: Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված լրացուցիչ ապահովում տրամադրելու պարտականությունը համարվում է խախտված, եթե այդ պարտականությունը չի կատարվել պահանջը ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում:»:		
21.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 255-րդ հոդված**	Իրավական որոշակիության ապահովման և հնարավոր տարընկալումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 255-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Նախապատրաստման փուլում կառավարչի ներկայացմամբ Դատարանի որոշմամբ կարող է կիրառվել սույն օրենսգրքի 120-րդ հոդվածով նախատեսված մորատորիում, եթե այն կնպաստի վարույթի անխափան և արդյունավետ իրականացմանը:»:	**Ընդունվել է:** Նախագծի 255-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրվել է:	**Ընդունվել է:**
22.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 284-րդ հոդված**	Սնանկության վարույթի հնարավոր չարաշահումները բացառելու, անբարեխիղճ պարտապանների համար բացասական հետևանքների	**Ընդունվել է:** Նախագծի 284-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետում «երեք ամսվա» բառերը	**Ընդունվել է:**

			նախատեսման անհրաժեշտությամբ պայմանավորված, ինչպես նաև շահագրգիռ մարմինների հետ քննարկումների արդյունքում առաջարկում ենք Նախագծի 284-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետում «երեք ամսվա» բառերը փոխարինել «մեկ տարվա» բառերով:	փոխարինվել են «մեկ տարվա» բառերով:	
23.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 291-րդ հոդված**	Իրավական որոշակիության ապահովման և հնարավոր տարընկալումներից խուսափելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով պրակտիկ դեպքերը և շահագրգիռ մարմիններից ստացված դիտարկումները՝ անհրաժեշտություն է առաջացել հստակեցնել հատուկ կարևորության կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագրի դեպքում որ մարմինն է տալիս երաշխիք՝ պարտապանի պարտավորությունների կատարման համար: Ըստ այդմ, առաջարկում ենք Նախագծի 291-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Պարտատերերի ժողովի որոշմամբ հատուկ կարևորության կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագիր չընդունվելու դեպքում Դատարանը կարող է որոշում կայացնել ներկայացված	**Ընդունվել է:** Նախագծի 291-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրվել է:	**Ընդունվել է:**

			ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման մասին սույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված դեպքում՝ իրավասու պետական մարմնի, իսկ սույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում՝ իրավասու տեղական ինքնակառավարման մարմնի միջնորդությամբ, եթե համապատասխան իրավասու պետական մարմնի կողմից տրամադրվում է երաշխիք՝ պարտապանի պարտավորությունների կատարման համար:»:		
24.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 358-րդ և 359-րդ հոդվածներ**	Իրավական որոշակիության ապահովման նպատակով, ինչպես նաև կարգավորումների գործնական կիրառությունը պազելու տեսանկյունից՝ անհրաժեշտություն է առաջացել հստակեցնել, թե ինչ են իրենցից ենթադրում անդրսահմանային սնանկության դրությաների մեկնաբանման կանոնները: Ըստ այդմ, առաջարկում ենք Նախագծի 359-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օտարերկրյա իրավունք կիրառելիս Դատարանը	**Ընդունվել է:** Նախագծի 358-րդ և 359-րդ հոդվածները վերախմբագրվել են:	**Ընդունվել է:**

			դրա նորմերի բովանդակությունը պարզում է համապատասխան օտարերկրյա պետությունում դրանց պաշտոնական մեկնաբանման և կիրառման պրակտիկային համապատասխան:»: Միաժամանակ, հաշվի առնելով կարգավորումների բովանդակությունը՝ առաջարկվում է փոփոխել 358-րդ և 359-րդ հոդվածների հերթականությունը:		
25.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 365-րդ հոդված**	Հաշվի առնելով պրակտիկ դեպքերը՝ առաջարկում ենք Նախագծի 365-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, եթե դատարանը չի գտնում, որ տվյալ հանգամանքներում այլ ծանուցման ձևն ավելի նպատակահարմար է: Ծանուցման իրականացման համար միջնորդագրերով և դիվանագիտական հաղորդակցության այլ ձևերով պաշտոնական միջամտություն չի պահանջվում» բառերը:	**Ընդունվել է:** Նախագծի 365-րդ հոդվածի 2-րդ մասը վերախմբագրվել է:	**Ընդունվել է:**
26.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 384-րդ հոդված**	Հաշվի առնելով Նախագծի ընդունումից հետո դրա կիրարկումն ապահովող միջոցառումների ծավալը, ինչպես նաև շահագրգիռ անձանց և մարմիններին առաջարկվող կարգավորումները ներկայացնելու անհրաժեշտությունը՝ առաջարկում	**Ընդունվել է:** Նախագծի 384-րդ հոդվածի 1-ին մասում «2026 թվականի հուլիսի 1-ից» բառերը փոխարինվել են «պաշտոնական հրապարակումից մեկ տարի	**Ընդունվել է:**

			ենք երկարաձգել օրենսգրքի ուժի մեջ մտնելու ժամկետը և Նախագծի 384-րդ հոդվածի 1-ին մասում «2026 թվականի հուլիսի 1-ից» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո» բառերով: Նույն տրամաբանությամբ, հաշվի առնելով հիմնական նախագծում կատարվող փոփոխությունը, առաջարկում ենք համապատասխան փոփոխություններ կատարել նաև հարակից օրենքների նախագծերում՝ «2026 թվականի հուլիսի 1-ից» բառերը փոխարինելով «պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո» բառերով: Միաժամանակ առաջարկում ենք հանել Նախագծի 384-րդ հոդվածի 11-րդ մասը՝ հաշվի առնելով շահագրգիռ մարմինների հետ քննարկումների արդյունքները: Ըստ այդմ, առաջարկվում է պահպանել կառավարիչների ընտրության գործող կարգը, որը թույլ է տալիս կիրառել ինչպես վիճակահանության տարբերակը (լիազոր մարմնի համակարգչային ծրագրով), այնպես էլ պարտատիրոջ կողմից թեկնածուի առաջադրման (առաջարկի)	հետո» բառերով, իսկ Նախագծի 384-րդ հոդվածի 11-րդ մասը հանվել է: Հարակից օրենքների նախագծերում «2026 թվականի հուլիսի 1-ից» բառերը փոխարինվել են «պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո» բառերով:	

			հնարավորությունը:		
27.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի ամբողջ տեքստ**	Առաջարկվում է նախագծի ամբողջ տեքստում կատարել հետևյալ տեխնիկական բնույթի փոփոխությունները. - իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից ձևակերպումները շարադրել հնարավորինս մատչելի և ընկալելի, - ապահովել նախագծում կիրառվող ձևակերպումների և տերմինների միասնականությունն ու միատեսակությունը, - նախագծում օգտագործվող հղումները համապատասխանեցնել հոդվածների համարակալմանը և բովանդակությանը, - ուղղել նախագծում առկա վրիպակները, գրասխալները, կետադրական նշանները և անհամապատասխանությունները:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**